

ՄԻՆԱՏՐՈՂ ԲԱՍԵՐԸ ԵՎ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Վ. Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
գոյշ կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս

Լ. Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Դաշտավայրի ազգային ազրարային համալսարանի հայցորդ,
ՄԱՆԵՐԻ ամփունգության տեսչությունում գլխավոր մասնագետ

ճամճերը երկրանի միջատներ են: Դայտնի են շուրջ 8 հազար տեսակ-ներ, որոնցից մեծ տարածվածություն ունեն հատկապես մարդկանց մոտ և նրանց շրջապատում ապրող սինանտրուած ճամճերը: Առավել տարածված է սենյակային ճանճը՝ *Musca domestica* տեսակը: Այս ճանճերը վայրի բնության մեջ համարյա չկան: Վարում են ցերեկային կյանք:

Սենյակային ճանճը համարվում է մի շարք ինֆեկցիոն և ինվազիոն հիվանդությունների մեխանիկական և կենսաբանական փոխանցող: Տարածում են հատկապես հեպատիտ A, պոլիմիելիտ, դիզենտերիա, որովայնային տիֆ, տուրերկուլյոզ և այլն: Ճանճերի աղիքներում որովայնային տիֆի հարուցիչները մնում են ախտածին 6 օր, դիզենտերիայի հարուցիչը՝ 2-3 օր, խոլերայի վիրուսը՝ 2 օր: Շատ ճանճեր կարող են իրենց համար սնունդ հանդիսացող կղանքային զանգվածի հետ կուլ տալ որդերի ձվեր և նախակենդանիների ցիստաներ, այս ձևով զուգարանահորերից հարուցիչների ձվերը դուրս են բերվում հողի մակերես: ճանճերի միջոցով հիվանդությունների հարուցիչների փոխանցման հավանականությունը կախված է դրանց քանակից, մարդկանց սննդի հետ շփվելու հնարավորությունից, ճանճերի մարմնի վրա կամ մարսողական համակարգում հարուցիչների պահպանման ժամանակից:

Բնակավայրերում մեծաքանակ ճանճերի առկայությունը վկայում է շրջապատում սանհտարական պայմանների խախտման մասին: ճանճերն իրենց համար սնունդ են գտնում մարդու շրջակայքում՝ բնակավայրերում, հասարակական սննդի կետերում, կոմունալ և կենցաղային սպասարկման վայրերում և այլ տեղերում:

Սեռահասուն ճանճի մարմնի մեծությունը 6-8 մմ է: Ունեն գորշ գունավորում, կրծքի թիկնային մասում կան 4 երկայնակի սև գծեր: Աչքերը խոշոր են, ֆասետային, մուգ կարմիր գույնի: Էգերի մոտ միջաշքային տարածքը մեծ է, քան արուների մոտ: Էգերն արուներից մեծ են:

Ինչպես բոլոր երկրանիները, այնպես էլ ճանճերը, թրիչքի համար օգտագործում են միայն առջևի թևերը: Դետին թևերը հետաձած են և կոչվում են

բզզանները: Կերչիններս կատարում են օդի մեջ հավասարակշռությունը պահելու ֆունկցիա:

Բերանային ապարատը լիգող-ծծող տիպի է, նրանք կարող են ուտել միայն հեղուկ սնունդ, պինդ սնունդը նախապես թռչում են իրենց թքով:

Կյանքի տևողությունը կախված է արտաքին միջավայրի ջերմաստիճանից, սեռահասուն ծներն ապրում են մինչև 1 ամիս, երբեմն 2 ամիս, լրիվ զարգացման ցիկլը կարող է տևել 8-20 օր: Գոյատևման համար օպտիմալ ջերմաստիճանը է համարվում 23-25 աստիճանը:

Տարածված են ամենուրեք: Եգերը միանգամից դնում են 70-120 սպիտակ գույնի 1.2 մմ երկարության ձվեր: Իր կյանքի ընթացքում կարող է դնել 600-1200 ծու՝ կախված կլիմայական պայմաններից: Զվի զարգացումը տևում է 8-50 ժամ: Լրիվ կերպարանափոխությամբ զարգացող միջատներ են: Թրթուրն ունի մինչև 13 մմ երկարություն, սպիտակ գույն, գուրկ է ոտքերից: Ապրում են արտաքրորանքներում, այլ նեխոտ կիսահեղուկ միջավայրերում: 3-25 օր հետո, 3 մաշկափոխությունից հետո թրթուրը տեղափոխվում է չոր հով տեղ և վեր է ածվում անշարժ հարսնյակի: Յարսնյակից դուրս եկած քաշվոր ծները շուրջ 2 ժամ չեն կարող թռչել և գտնվում են կեղտոտ մակերևույթների վրա, որտեղ ընթանում է միջիարդավոր հիվանդածին մանրէների զարգացումն ու բազմացումը: Տանձերի մարմնի վրա լինում են 6-8 մլն բակտերիաներ, իսկ աղիքներում արդեն 25-30 մլն միկրոբներ: Շուրջ 60 տեսակի միկրոօրգանիզմներ, որոնք հայտնաբերվում են ճանձերի վրա, ընդունակ են առաջ բերել մարդկանց ու կենդանիների համար վտանգավոր հիվանդություններ: Յարսնյակից դուրս գալուց 36 ժամ հետո սեռահասուն ճանձերը կարող են գործապիրվել:

Տարվա ընթացքում փոխվում է սենյակային ճանձի 9-20 սերունդ: Ապրիլից օգոստոս ամիսներին սեռահասուն ճանձերի գույգի տվածք սերնդի քանակը չնահանալու դեպքում կարող է պատել երկրագնդի մակերևույթը 14 մ հաստության շերտով: Զմեռում են ինչպես թրթուրներն ու հարսնյակները, այնպես էլ սեռահասուն բեղմնավորված ծները:

Սնունդ փնտրելու համար ճանձերը թռչում են սենյակներ, նստում են սննդամթերքի վրա և դրանց փոխանցում հիվանդածին միկրոօրգանիզմներ, որոնք էլ սննդի հետ անցնելով մարդկանց օրգանիզմ՝ առաջ են բերում սուր աղիքային հիվանդություններ:

Ճանձերի դեմ պայքարելու հասարակ մեթոդները հայտնի են բոլորին, օգտագործում են հակամոծակային ցանցեր, կայուն ժապավեմներ, լավ փակում են դռներն ու պատուհանները: Ճանձերն օժտված են բարձր հարմարողականությամբ և հեշտությամբ հարմարվում են արտաքին միջավայրի փո-

փոխվող պայմաններին, որն էապես դժվարացնում է նրանց դեմ տարվող պայքարը:

ճանձերի դեմ տարվող պայքարի առաջնային սկզբունքներից մեկը սահմատարական միջոցառումներն են, որոնք համարվում են հիմնական միջոցառումներ: Նետառապես ճանձերի դեմ պայքարը անհրաժեշտ է սկսել սահմատարական մաքրությունից:

Սահմատարական մաքրության առաջին փուլը աղբի, սննդային մնացորդների հավաքումն է լավ փակվող մնատաղական և փայտյա արկղերում: Անհրաժեշտ է կանխել ճանձերի սերնդատվությունը անմիջականորեն շենքերում, որի համար պարտադիր է խստորեն պահպանել մաքրություն, հետևողականորեն հավաքել սննդամթերքն ու դրանց մնացորդները: Աղբամանները ամեն օր դատարկել և հետևել, որ դրա հատակին մնացորդներ չմնան և լվանալ:

Երկրորդ փուլը դա աղբի ոչնչացումն է: Ամենից տարածված մեթոդը աղբի տեղափոխումն է աղբավայրեր, որտեղ հայտնաբերվում են 2-րդ և 3-րդ աստիճանի թրթուրներով ախտահարված աղբ: Մոտավորապես 1 շաբաթվա ընթացքում դուրս են գալիս թևավոր ճանձերը: Աղբի արագ և ճիշտ վերամշակումից է կախված ճանձերի հետագա տարածման կանխումը: Որպեսզի ճանձերը չկարողանան բազմանալ, աղբանոցում անհրաժեշտ է ճիշտ կազմակերպել աշխատանքները: Խրանատը կամ փոսք, որտեղ լցվում է աղբը, լցվելուց հետո ծածկում են հողով և ներենաներով տոփանում են: Եթե կենցաղային և շինարարական աղբը լցվում է միասին, ապա ավելի խիստ է տոփանվում: Այսպիսի միջոցառումներն անհրաժեշտ է անցկացնել ոչ ուշ քան 5 օրը մեկ անգամ, քանի որ մինչև 1 մետր հաստության փուլից շերտի տակից կարող են հարսնակից դուրս եկած սեռահասուն ձևերը դուրս գալ նակերեն: Գյուղական վայրերում ճանձերի սերնդատվությունն ընթանում է չիորվող աղբում և գոմաղբում: Եթե աղբահորերն ունեն ոչ ջրաթափանց պատեր և լավ փակվող դռներ, ապա ճանձերն այդպիսի միջավայրում չեն կարող բազմանալ: Բավականին բարդ է գոմաղբի ախտազերծումը: Քիմնական խոնդրն է կանխել ճանձերի զարգացումը գոմաղբում: Գոմաղբի մշակումը ինսեկտիցիդներով անթույլատրելի է, քանի որ այն օգտագործվում է որպես պարարտանյութ: Գոմաղբի մեջ որոշ քիմիական պարարտանյութեր ավելացնելու դեպքում կանխվում է ճանձերի թրթուրների զարգացումը: Կարելի է ավելացնել հատկապես ազոտական պարարտանյութ կամ ամոնիակաջուր, որոնք ունեն միջատասպան ազդեցություն ճանձերի թրթուրային ձևերի վրա: Լավ արդյունք է ստացվում, եթե գոմաղբին ավելացնում են զյուղատնտեսության մեջ լայն կիրառություն ունեցող թիազոն 3 գ/մ 3 չափարաժնով:

Եթե գոմաղբը կոմպոստավորում են խրամատում, ապա թրթուրների զարգացումը կշարունակվի: Հարսնյակավորումն ընդհանրապես տեղի է ունենում գոմաղբի չորացող հատվածներում: Կոլրմից դրւու եկած ճամճերը շարժվում են միայն ուղղահայաց և որպեսզի կանխավի նրանց թռիչքը անհրաժեշտ է կոմպոստը վերևից ծածկել բրեգենտով կամ մուգ գույնի պոլիէթիլենային թաղանթով: Հասնելով ծածկոցին չեն կարող անցնել արտաքին միջավայր և կոչօչանան: Եթե գոմաղբը պահպում է դարսակույտերով, ապա կողային մասերին պետք է քսել կավացեխ, իսկ վերևից ծածկել բրեգենտով: Թռիչքի պարտից հետո /10-14 օր/ ծածկոցը կարելի է հանել:

Զուգարանահորերում ճամճերի զարգացումը կանխելու համար անհրաժեշտ է պահպանել հետևյալ կարգը: Զուգարանահորը պետք է լինի ոչ ջրափական, հերմետիկ փակվող: Պատերը, տամիքը, հատակը պետք է լինեն սարքին վիճակում և չունենան ճեղքեր: Պատուհաններն ու օդափոխության խողովակները պետք է ծածկված լինեն հակամոծակային ցանցերով, իսկ դռների վրա լինեն փակող զսպանակներ: Նպատակահարմար է ամեն օր հորի մեջ լցնել տորֆի կամ ավազի շերտ: Անհրաժեշտ է զուգարանները պարբերաբար մաքրել աղբից:

Այս ձևով կարելի է նվազագույնի հասցնել սինանտրով ճամճերի ձվադրումը առանց լրացուցիչ դեգինսեկցիոն միջոցառումների: Աղբը տեղափոխման ժամանակացույցի խախտման, ոչ ճիշտ աղբահանության կազմակերպման և այլ սանհիտարական խախտումների դեպքում անհրաժեշտ է անցկացնել դեգինսեկցիոն միջոցառումներ: Ամենից արդյունավետ են հակարթության մշակումները: Անհատական տնտեսություններում խորհուրդ է տրվում զուգարանահորերի մեջ լցնել ջուր, լվացքի փոշիներ պարունակող լվացքաջուր:

Սեռահասուն ծների դեմ տարվող մշակումները միայն կարճաժամկետ արդյունք են տալիս և չեն կարող նվազեցնել ճամճերի քանակը: Հնարավոր չեն վերացնել ճամճերին, առանց ձվադրման վայրերը վերացնելու:

Սեռահասուն ծների նկատմամբ անցկացվող բազմակի քիմիական մշակումների արդյունքում ճամճերի սերունդների մոտ առաջանում է կայունություն ինսեկտիցիդների նկատմամբ: Սեռահասուն ծների նկատմամբ ամենից արդյունավետ մեթոդը գրավչանյութերի կիրառումն է: Կարելի է օգտագործել գրավչանյութ, որի կազմի մեջ կա 40% շաքարահյուր և 2% ինսեկտիցիդ:

Եվ վերջապես, անհրաժեշտ է լայնորեն օգտագործել մեխանիկական պաշտպանության մեթոդներ, ինչպիսիք են պատուհանների ցանցապատումը, կաչում ժապավենների կախումը: Այս մեթոդները համակցելով մանրազնին մաքրության հետ, թույլ կտան հրաժարվել սեռահասուն ծների դեմ տարվող պայթարի միջոցառումներից:

Յանճերի դեմ տարվող պայքարը դժվար խնդիր է: Յաջողությունների հասնելու համար անհրաժեշտ է անցկացնել համալիր միջոցառումներ քաղաքի և բնակավայրերի կրծունակ բարեկարգման ու սանիտարական մաքրության ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում կատարել դեգինսեկցիոն աշխատանքներ, որոնք ուղղված են սեռահասուն և ոչ սեռահասուն ծների դեմ: Յուրաքանչյուրի հետաքրքրության շրջանակներում պետք է լինեն չքույլատրել ձվադրման վայրերի ի հայտ գալը և ճանճերի ներթափանցումը շենքերից ներս:

Բանալի բառեր - սեմյակային ճանճ, պայքարի միջոցներ, քևեր

THE SYNANTROP FLIES AND MEASURES OF STRUGGLE

V. V. GRIGORYAN

Doctor of Biology, Associate Professor,

Lecturer of GSU

V. L. GRIGORYAN

Applicant of State Agrarian University of Armenia,

Chief Specialist of the Food Safety Inspection

Domestic fly is a wide spread insect which is known as a mechanical and biological transferer of the agents of some infection and parasitic diseases. The main principle of struggle against flies is organisation of complex sanitary measures.

СИНАНТРОПНЫЕ МУХИ И МЕРЫ БОРЬБЫ

В. В. ГРИГОРЯН

Кандидат биологических наук, доцент,

преподаватель ГГУ

Л. В. ГРИГОРЯН

*Соискатель Государственного аграрного университета Армении,
ведущий специалист Инспекции по безопасности пищевых продуктов*

Комнатная муха одна из повсеместно распространенных синантропных насекомых, являющийся механическим и биологическим переносчиком возбудителей ряда инфекционных и инвазионных заболеваний животных. Основным методом борьбы против этих переносчиков является организация комплексных санитарных мероприятий.